

**ՀՀ ՎՃՈՎԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾ ԹԻՎ ՎԴ/4099/05/23
ՄԱՍԻՆ**

Գլխավոր տեղեկություն

Տիպ Որոշում

Ակտի տիպ Հիմնական ակտ (29.09.2025-մինչ օրս)

Կարգավիճակ Գործում է

Սկզբնաղբյուր Միասնական կայք 2025.11.10-2025.11.23
Պաշտոնական հրապարակման օրը 10.11.2025

Ընդունող մարմին Վճռաբեկ դատարան

Ընդունման ամսաթիվ 29.09.2025

Ստորագրող մարմին Նախագահող

Ստորագրման ամսաթիվ 29.09.2025

Ուժի մեջ մտնելու ամսաթիվ 29.09.2025

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/4099/05/23
2025 թ.

Վարչական գործ թիվ ՎԴ/4099/05/23

Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

Մ. Մելքոնյան
Ա. Հարությունյան
Հ. Խաչատրյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝
Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

Նախագահող

գեկուցող

Հ.
Բեդևյան
Ք.
Մկրյան
Ա.
Թովմասյան
Լ.
Հակոբյան
Ռ.
Հակոբյան

2025 թվականի սեպտեմբերի 29-ին
գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝
Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 16.10.2024 թվականի
որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի «Ռոք-Արթ» ՍՊ ընկերության (այսուհետ՝
Ընկերություն) ընդդեմ Կոմիտեի՝ 27.03.2023 թվականի թիվ 4229680 արձանագրությունը և
Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 05.05.2023
թվականի թիվ 34/16 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի 27.03.2023
թվականի թիվ 4229680 արձանագրությունը և Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների
բողոքարկման հանձնաժողովի 05.05.2023 թվականի թիվ 34/16 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Ա. Ավագյան) (այսուհետ՝ Դատարան) 19.01.2024
թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.10.2024
թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 19.01.2024
թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտե (ներկայացուցիչ Արման Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ
հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 27-
րդ, 28-րդ հոդվածները և 124-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, «Վարչարարության
հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը,
ՀՀ հարկային օրենսգրքի 343-րդ հոդվածը, 380-րդ հոդվածը, իրավահարաբերության ծագման
պահին գործող խմբագրությամբ ՀՀ հարկային օրենսգրքի 345-րդ հոդվածը,

իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ կառավարության
03.12.2020 թվականի «Հսկիչ դրամարկղային մեքենային և ցանցային կապի միջոցների
ներկայացվող տեխնիկական պահանջները, հսկիչ դրամարկղային մեքենան հարկային
մարմնում գրանցման և գրանցումից հանման կարգը, հսկիչ դրամարկղային մեքենայի
կիրառության կանոնները հաստատելու, էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի
էլեկտրոնային կտրոնի դուրս գրման կարգը, էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների
տեխնիկական պահանջները, դրանց հաշվառման, հաշվառումից հանման կարգը, դրանց
միջոցով տրամադրվող էլեկտրոնային կտրոնի պարտադիր վավերապայմանների
ներկայացվող, ինչպես նաև ինտերնետային կայքի կամ էլեկտրոնային հավելվածին
(էլեկտրոնային առևտրային հարթակին) ներկայացվող պահանջները սահմանելու և
Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1318-Ն

որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1976-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) թիվ 3-րդ հավելվածի «Հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության» կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 3-րդ կետը, 13-րդ կետը, 17-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը, չի կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածը, 126-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ուսումնասիրություն իրականացված լինելու և հսկիչ գնում կատարված լինելու փաստը հաստատվում է սույն գործում առկա «Z» հաշվետվությամբ, հսկիչ գնման ընթացքում կատարված խախտումների վերաբերյալ թիվ 4229680 արձանագրությամբ, որոնք բավարար ապացույց են իրավախախտման փաստն արձանագրելու համար:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հայցվորը, վիճարկելով հսկիչ գնում իրականացված լինելու փաստը, չի ներկայացրել որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց՝ հաստատելու իր կողմից վկայակոչված փաստական հանգամանքների առկայությունը, այնինչ՝ հարկային մարմինը Դատարանին ներկայացրել է բավարար և պատշաճ ապացույցներ՝ վիճելի փաստերի հաստատման համար:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ հարկային տեսուչի կողմից կազմված նյութերից և եղած ապացույցներից բացի որևէ կերպ չէր կարող ձեռք բերվել գնման փաստը հավաստող այլ ապացույց, քանի որ Ընկերությունը, իրացնելով իր՝ խախտման արձանագրությունը չստորագրելու իրավունքը, իրաժարվել է այն ստորագրելուց, ուստի վարույթի ընթացքում տևտեսվարող սուբյեկտի մերժողական վարքագծից բխող անբարենպաստ հետևանքները պետք է դրվի հայցվորի վրա:

Վերաքննիչ դատարանը սահմանափակվել է միայն արձանագրելով, որ որևէ կերպ չի ապացուցվում այն հանգամանքը, որ հայցվորի մոտ հենց վիճարկվող ակտում նշված ժամանակ է կատարվել քննարկվող հսկիչ գնումը, մինչդեռ նման դիրքորոշման համար վերջինս առնվազն պարտավոր էր հիմնավորել, թե ինչու այս կամ այն ապացույցը բավարար չէ որևէ փաստի հաստատման կամ մերժման համար, մատնանշել, թե որ ապացույցների համակցության արդյունքում վիճելի հանդիսացող փաստը կարող էր պատշաճ ապացուցվել:

Սույն վճռաբեկ բողոքի շրջանակներում անհրաժեշտ է, որ Վճռաբեկ դատարանն անդրադառնա այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք իրավաչափ է Վերաքննիչ դատարանի եզրահանգումն առ այն, որ վարչական ակտի կայացման համար հիմք հանդիսացած նյութերով չի հիմնավորվում Կոմիտեի կողմից 24.02.2023 թվականին տրված թիվ 4229680 հանձնարարագրի շրջանակներում 02.03.2023 թվականին՝ ժամը 15:35-ին, Ընկերությունում իրականացված հսկիչ գնում կատարված լինելու հանգամանքը:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոքաբերը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 16.10.2024 թվականի որոշումը՝ գործն ուղարկելով համապատասխան դատարան՝ նոր քննության, կամ կայացնել նոր դատական ակտ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության ակտի 24.02.2023 թվականի թիվ 4229680 հանձնարարագրի համաձայն՝ հանձնարարվել է Ընկերությունում իրականացնել ուսումնասիրություն՝ հսկիչ գնում, հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների համար սահմանված կարգերի ու կանոնների պահանջների պահպանումն ուսումնասիրելու նպատակով: Ուսումնասիրվող ժամանակաշրջանի սկիզբը նշվել է 27.02.2023 թվականը, իսկ ավարտ՝ 13.03.2023 թվականը: Ուսումնասիրության ժամկետը՝ մինչև 10 անընդմեջ աշխատանքային օր: Հիմքը՝ ՀՀ հարկային օրենսգրքի 343-րդ հոդվածը և իրավաբարբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ հարկային օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը (**գ.թ. 53-54**):

2) Համաձայն 02.03.2023 թվականի «Հսկիչ գնման (գնումների) ընթացքում կատարված խախտումների վերաբերյալ» թիվ 4229680 արձանագրության՝ Ա.Ա.-ի¹ կողմից 02.03.2023 թվականին՝ ժամը 15:35-ին, Օհանով 26/6 հասցեում գտնվող դեղատնից կատարվել է գնում 990 ՀՀ դրամի չափով՝ բժշկական սպիրտ և կարդիոսպիրին, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով, վճարվել է 1.000 ՀՀ դրամ, որից վերադարձվել է մանր 10 ՀՀ դրամ: Մարիամ Հարությունյանը գումարը չի մուտքագրել ՀՂՄ և համապատասխան գումարի ՀՂՄ կտրոն չի տրամադրել: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այսուհետև, Ա.Բ.-ի² կողմից ժամը «**15:37**»-ին ՀՂՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն՝ 80.972 ՀՀ դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չի եղել կատարված վճարման արժեքը: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 990 ՀՀ դրամը, ժամը «**15:38**»-ին մուտքագրվել է ՀՂՄ, դուրս է բերվել ՀՂՄ կտրոն (N 00077928): ժամը «**15:38**»-ին նորից դուրս է բերվել «Z» հաշվետվությունը՝ 81.962 ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

Արձանագրությունը ստորագրել են հսկիչ գնում կատարած անձինք:

Արձանագրության «Հարկ վճարող (գործադիր մարմնի ղեկավար) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի և հարկ վճարողի անունից ապրանքներ մատակարարող (վաճառող), աշխատանքներ կատարող, ծառայություններ մատուցող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատող» հատվածում առկա է գրություն «Մարիամ Հարությունյանը իրաժարվեց ստորագրել» բովանդակությամբ:

Միաժամանակ արձանագրության վերջնամասում՝ «նշում արձանագրությունը

ստորագրելուց և ստանալուց հրաժարվելու մասին» տողում, առկա է գրություն «ՏՆ Դավիթ Մկրտչյանը բացակայում է» բովանդակությամբ **(գ.թ. 57-58):**

3) Կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության կողմից 10.03.2023 թվականին կազմվել է թիվ 4229680 արձանագրության նախագիծը **(գ.թ. 59-62):**

4) Կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 27.03.2023 թվականի թիվ 4229680 արձանագրության համաձայն՝ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների համար սահմանված կարգերի ու կանոնների պահանջների պահպանումն ուսումնասիրելու նպատակով Կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության ՓՀՎԸՀ թիվ 4 բաժնի գլխավոր հարկային տեսուչ Ա.Ա.-ի³ կողմից 02.03.2023 թվականին ժամը 15:35-ին, ք. Երևան, Օհանյով 26/6 հասցեում գործող դեղատնից կատարվել է հսկիչ գնումը 990 ՀՀ դրամի չափով՝ բժշկական սպիրտ և կարդիոասպիրին, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով, վճարվել է 1.000 ՀՀ դրամ, որից վերադարձվել է մանրը՝ 10 ՀՀ դրամ: Մարիամ Հարությունյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Ստուգումն իրականացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման, այնուհետև ավագ հարկային տեսուչ Ա.Բ.-ի⁴ կողմից ժամը **«15:37»-ին** ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն՝ 80.972 ՀՀ դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չի եղել կատարված վճարման արժեքը: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 990 ՀՀ դրամ, ժամը **«15:38»-ին** մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն (ԿՀ: 00077928) և ժամը **«15:38»-ին** նորից դուրս է բերվել «Z» հաշվետվությունը՝ 81.962 ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

Ստուգմամբ պարզվել է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ հարկային օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ կետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 03.12.2020 թվականի թիվ 1976-Ն որոշման հավելված թիվ 3-ով սահմանված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների 3-րդ կետի պահանջները, համաձայն նույն կարգի 17-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով գնված ապրանքի կամ ստացված ծառայության արժեքի կամ քանակի չմուտքագրումը հսկիչ-դրամարկղային մեքենա դիտվում է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտում: Արդյունքում տնտեսվարող սուբյեկտին առաջադրվել է տուգանք ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 2-րդ կետով (...): 2022 թվականի 4 եռամսյակի ընթացքում հսկիչ դրամարկղային մեքենաներով արձանագրված շրջանառությունը կազմել է 14.686.028 ՀՀ դրամ: Տնտեսվարող սուբյեկտին առաջադրվել է տուգանք 273.430 ՀՀ դրամի չափով (200.000+14.686.028*05%) **(գ.թ. 64-67):**

5) Վարչական վարույթի կյուրթերում առկա են 02.03.2023 թվականին, ժամը **«15:07»-ին**, ՀԴՄ-ից 80.972 ՀՀ դրամ ընդհանուր գումարով դուրս բերված «Z» հաշվետվության, ինչպես նաև 02.03.2023 թվականին, ժամը **«15:08»-ին**, ՀԴՄ-ից 81.962 ՀՀ դրամ ընդհանուր գումարով դուրս բերված «Z» հաշվետվության պատճենները **(գ.թ. 55-56):**

6) Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 05.05.2023 թվականի թիվ 34/16 որոշման համաձայն՝ Կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 27.03.2023 թվականի թիվ 4229680 արձանագրության դեմ Ընկերության դիմում-բողոքը մերժվել է **(գ.թ. 14-17):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ և 27-րդ հոդվածների, Կանոնների 3-րդ կետի, 13-րդ կետի, 17-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի խախտման արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որը, սակայն, հերքվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատելու արդյունքում՝ հիմնավորված ու պատճառաբանված դատական ակտ կայացնելու օրենսդրական պահանջի պահպանման հարցին, սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում անհրաժեշտ է համարում պատասխանել այն հարցադրմանը, թե արդյո՞ք հսկիչ գնման (գնումների) ընթացքում կատարված խախտումների վերաբերյալ արձանագրությունը և հսկիչ դրամարկղային մեքենա (այսուհետև՝ ՀԴՄ) սարքի «Z» հաշվետվությունը բավարար ապացույցներ չեն տնտեսվարողի կողմից ՀԴՄ կտրոն չտրամադրելու իրավախախտման փաստն արձանագրելու համար:

Վճռաբեկ դատարանը, ստորև անդրադառնալով հսկիչ գնման (գնումների) ընթացքում կատարված խախտումների վերաբերյալ արձանագրությունը և ՀԴՄ սարքի «Z» հաշվետվությունը տնտեսվարողի կողմից ՀԴՄ կտրոն չտրամադրելու իրավախախտումն արձանագրելու համար բավարար ապացույց դիտարկելու փաստին, հարկ է համարում նշել հետևյալը.

ՀՀ հարկային օրենսգրքի 328-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային հսկողությունը հարկային մարմին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողությունն է՝ հարկային մարմին վերապահված լիազորությունների շրջանակներում հարկային մարմնի (պաշտոնատար

անձանց՝ Օրենսգրքով նախատեսված գործողությունների ամբողջությունը: Օրենսգրքի կիրառության իմաստով՝ հարկային մարմինի հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտեր են համարվում Օրենսգրքի 2-րդ հոդվածով սահմանված՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը, ինչպես նաև այն իրավական ակտերը, որոնց պահանջների կատարման նկատմամբ հսկողության լիազորություններն այդ իրավական ակտերով վերապահված են հարկային մարմին:

ՀՀ հարկային օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հարկային հսկողությունը, ի թիվս այլնի, իրականացվում է հարկային ուսումնասիրությունների միջոցով:

ՀՀ հարկային օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային ուսումնասիրությունը հարկային մարմնի լիազորությունների շրջանակներում նույն գլխով սահմանված կարգով իրականացվող ընթացակարգ է, որի նպատակն է հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջներին դրանց կատարման համապատասխանությունը պարզելը, այդ պահանջների խախտումները կանխելն ու խափանելը, դրանց հայտնաբերելը, նույն բաժնով սահմանված դեպքերում հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված կարգով հարկային պարտավորությունների առաջադրումն ու հայտնաբերված խախտումների համար պատասխանատվություն կիրառելը:

Նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հարկային հսկողության շրջանակներում հարկային ուսումնասիրությունները, ի թիվս այլնի, իրականացվում են արտագնա ուսումնասիրության միջոցով: Ըստ նույն դրույթի՝ արտագնա ուսումնասիրությունը հարկային մարմնի լիազորությունների շրջանակներում հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների կատարման ճշտությունը պարզելու նպատակով նույն գլխով սահմանված կարգով հարկ վճարողի մոտ իրականացվող ուսումնասիրությունն է:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ հարկային օրենսգրքի 343-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հարկային հսկողության շրջանակներում արտագնա հարկային ուսումնասիրությունների տեսակ է հսկիչ գնումը:

ՀՀ հարկային օրենսգրքի 343-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ արտագնա հարկային ուսումնասիրություններն իրականացվում են հարկային մարմնի ղեկավարի տված հանձնարարագրի հիման վրա, (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ հարկային օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկ վճարողի հարկման օբյեկտների, հարկման բազաների և հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման), հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման, հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների, արտարժույթի առջ ու վաճառքի գործառնությունների գրանցման, ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորման, «Անկանխիկ գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում ու կարգով վճարային քարտերով անկանխիկ վճարումներ չընդունելու, այդ թվում՝ վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորությունն չապահովելու կամ կանխիկ դրամով գումարի ընդունման սահմանափակումները չպահպանելու, ինչպես նաև արժույթային գործարքների իրականացման համար սահմանված կարգերի ու կանոնների պահանջների պահպանման նկատմամբ ուսումնասիրության նպատակով հարկային մարմինը կարող է իրականացնել հսկիչ գնում (գնումներ):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հսկիչ գնումներն իրականացվում են Օրենսգրքի 343-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան տրված հանձնարարագրի հիման վրա: (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով հսկիչ գնում իրականացնելու անհրաժեշտ պայմաններին, արձանագրել է, որ (...) հսկիչ գնում կատարելու լիազորությունը կարող է հաստատվել միայն հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի կողմից տրված գրավոր հանձնարարագրով, որը պետք է պարունակի հետևյալ վավերապայմանները՝ հսկիչ գնում կատարելու հիմքերը, նպատակը, տևողությունը սուբյեկտի տվյալները, հսկիչ գնում իրականացնելու վայրը, ժամկետները, հսկիչ գնում իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձի տվյալները: Հսկիչ գնումն այլ անձի միջոցով իրականացնելու դեպքում հանձնարարագրում պետք է նշվի նաև այդ անձի տվյալները (տե՛ս, «Սթար Դիվայդ» փակ բաժնետիրական ընկերությունն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ԿԴ/5848/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.11.2009 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հսկիչ գնումը հարկային հսկողության մեկ այլ հարկային ուսումնասիրության եղանակ է: Այն, ի թիվս հարկային ստուգման հետապնդած նպատակների, հետապնդում է Օրենսգրքով սահմանված դեպքերում հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված կարգով հարկային պարտավորություններ հարկ վճարողին առաջադրելու և հայտնաբերված խախտումների համար պատասխանատվություն կիրառելու նպատակ: Հսկիչ գնման, որպես արտագնա հարկային ուսումնասիրության տեսակի, դեպքում նույնպես պահանջվում է փաստական հիմքի՝ հարկային մարմնի ղեկավարի տված գրավոր հանձնարարագրի առկայություն, որտեղ նշվում են ուսումնասիրության տեսակը, նպատակը և իրավական հիմքերը: Հսկիչ գնման դեպքում գրավոր հանձնարարագրի առկայության մասին ուղղակի պահանջ նախատեսում է Օրենսգրքի 345-րդ հոդվածի 3-րդ մասը, որը միաժամանակ սահմանում է դրա ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները՝ հղում կատարելով նույն օրենսգրքի 343-րդ հոդվածի 6-րդ մասին (տե՛ս, *անհատ ձեռնարկատեր Հասմիկ Խաչատրյանն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ԿԴ/10397/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.10.2021 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ՀՀ հարկային օրենսգրքի 333-րդ հոդվածով սահմանվել են հարկային հսկողության իրականացման եղանակները. հարկային ուսումնասիրությունն այդ եղանակներից մեկն է և իրականացվում է հարկային մարմնի լիազորությունների շրջանակներում՝ հարկային մարմինների կողմից կա'մ հարկային մարմնում կամերալ (ներքին) ձևով, կա'մ հարկ վճարողի մոտ՝ արտագնա եղանակով: Հարկային ուսումնասիրությունն իրականացվում է՝ նպատակ ունենալով պարզելու հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջներին դրանց կատարման համապատասխանությունը, հայտնաբերելու, կանխելու և խափանելու այդ պահանջների խախտումները, խախտումների բացահայտման դեպքում՝ կիրառելու համապատասխան պատասխանատվության միջոցներ: Անդրադառնալով հարկային հսկողության շրջանակներում արտագնա հարկային ուսումնասիրություններին՝ հարկ է նշել, որ դրանք իրականացվում են նաև հսկիչ գնումների միջոցով, որոնց ընթացքում հսկողությունն իրականացնող մարմինը միջոցներ է ձեռնարկում գործարքի կատարման իրավիճակ ստեղծելու համար, որպեսզի ստուգի ապրանքների վաճառքի ընթացքում, աշխատանք կատարելիս կամ ծառայություններ մատուցելիս իրավաբանական անձանց և (կամ) անհատ ձեռնարկատերերի կողմից օրենքի խախտումները պահանջներին նրանց գործողությունների (անգործության) համապատասխանությունը (տե՛ս, *Ա/Զ Անահիտ Վերանյանն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/10397/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2025 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերոգրյալ դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ հարկային մարմինը հսկիչ գնման միջոցով հարկային ուսումնասիրությունն իրականացնում է հայտնաբերելու, կանխելու և խափանելու համար տնտեսվարողի կողմից ՀՀ հարկային օրենսդրության պահանջների խախտումները, իսկ խախտումների բացահայտման դեպքում՝ կիրառելու համապատասխան պատասխանատվության միջոցներ: Նշվածի համատեքստում անդրադառնալով տնտեսվարողի կողմից սպառողին ՀԴՄ կտրոն չտրամադրելու դեպքերին և հարկային մարմնի կողմից դրանց բացահայտման հետևանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ հարկային օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները պարտավոր են կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով դրամական հաշվարկներն իրականացնել Կառավարության սահմանած կարգով հարկային մարմնում գրանցված և Կառավարության սահմանած՝ հսկիչ դրամարկղային մեքենային ներկայացվող տեխնիկական պահանջները բավարարող հսկիչ դրամարկղային մեքենայով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հսկիչ դրամարկղային մեքենա կիրառող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով դրամական հաշվարկներ իրականացնելիս պարտավոր են ապրանքներ ձեռքբերողին, աշխատանքներ ընդունողին կամ ծառայություններ ստացողին տրամադրել հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոն:

Հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի վրա պետք է տպագրված լինի հետևյալ տեղեկատվությունը (տվյալները).

1) կտրոնի հերթական համարը (ԿՀ)՝ 8 ՆԻԶ.

2) հսկիչ դրամարկղային մեքենա կիրառողի անվանումը (կազմակերպության անվանումը և կազմակերպաիրավական տեսակի հապավումը, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի անունը, ազգանունը).

3) հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության վայրի հասցեն, իսկ շրջիկ առևտրի կետերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելու դեպքում՝ կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) գտնվելու (հաշվառման) վայրի հասցեն, ավտոմոբիլի և (կամ) դրա կցորդի (կիսակցորդի) մակնիշը և հաշվառման համարանիշը.

4) հսկիչ դրամարկղային մեքենա կիրառողի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), իսկ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնը կազմակերպության ներկայացուցչին, անհատ ձեռնարկատիրոջը կամ նրա ներկայացուցչին, նոտարին կամ նրա ներկայացուցչին տրամադրելու դեպքում՝ նաև համապատասխանաբար ապրանք ձեռք բերող, աշխատանք ընդունող և (կամ) ծառայություն ստացող կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ).

5) հսկիչ դրամարկղային մեքենայի գրանցման համարը (ԳՀ).

6) կտրոնի տպագրման վայրկյանը, թույն, ժամը, օրը, ամիսը, տարին, իսկ արտաքին (առևտրային) ծրագիր կիրառելու դեպքում՝ հսկիչ դրամարկղային մեքենայի կողմից գներագրվող վայրկյանը, թույն, ժամը, օրը, ամիսը, տարին.

7) սպասարկող բաժնի համարը, բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների.

8) ապրանքի անվանումը և ապրանքային դիրքը, աշխատանքի կամ ծառայության անվանումը և կոդը, իսկ հանրային սննդի ծառայությունների մատուցման դեպքում՝ նաև փաստացի մատուցվող ծառայության շրջանակներում տրամադրվող ճաշացուցակը (կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի և գնովի այլ ապրանքների անվանումները), բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների՝ Կառավարության սահմանած կարգին և ժամկետներին համապատասխան.

9) գնվող ապրանքի քանակը, դրա չափման միավորը, բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների՝ Կառավարության սահմանած կարգին և ժամկետներին համապատասխան.

10) կիրառված գեղչի չափը (կիրառվելու դեպքում)։

11) վճարման ենթակա գումարները՝ ըստ բաժինների։

12) ընդհանուր գումարը, ներառյալ՝ ԱԱՀ-ն, եթե գործարքն իրականացնողը ԱԱՀ վճարող է և գործարքը ենթակա է ԱԱՀ-ով հարկման, բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների։

13) ԱԱՀ-ի գումարը, եթե գործարքն իրականացնողը ԱԱՀ վճարող է և գործարքը ենթակա է ԱԱՀ-ով հարկման, բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների։

14) պատասխանատու անձի (գանձապահի) համարը։

15) ֆիսկալավորման ռեժիմի նշանը (Ֆ)։

16) «կանխավճար» գրառումը՝ կանխավճարների ստացման, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարզ չէ, թե վերցված գումարների դիմաց հետագայում ինչ ապրանքներ կիրացվեն, ինչ աշխատանքներ կկատարվեն կամ ինչ ծառայություններ կմատուցվեն։

17) հարկային մարմնի հաստատած այգորիթմով գեներացվող ֆիսկալ համարը՝ 8 նիշ (բացառությամբ վերադարձի կտրոնների)։

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հսկիչ դրամարկղային մեքենային և ցանցային կապի միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները, հսկիչ դրամարկղային մեքենան հարկային մարմնում գրանցման և գրանցումից հանման կարգը, հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության կանոնները հաստատում է Կառավարությունը։

Կանոնների 1-ին կետի համաձայն՝ հսկիչ դրամարկղային մեքենա (այսուհետ՝ ՀԴՄ) կիրառողներն ապրանքներ վաճառելիս կամ աշխատանքներ կատարելիս կամ ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով կամ վճարային քարտերի միջոցով (չիպային, անհպում և մագնիսական), առկայության դեպքում նաև այլ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող վճարային գործիքներով դրամական հաշվարկները (այսուհետ՝ հաշվարկներ) իրականացնում են նույն որոշմամբ հաստատված պահանջները բավարարող ՀԴՄ-ի միջոցով։

Նույն Կանոնների 3-րդ կետի համաձայն՝ գանձապահը պարտավոր է՝

1) ՀԴՄ-ի միջոցով մուտքագրել ՀԴՄ կտրոնի վրա տպագրման համար անհրաժեշտ տվյալները, որոշել գնման ընդհանուր գումարը և տեղեկացնել գևորդին կամ պատվիրատուին։

2) ապրանքները հանձնելու պահին՝ գևորդից կամ կատարված աշխատանքների կամ մատուցված ծառայությունների դիմաց՝ պատվիրատուից գումար ստանալու դեպքում, իսկ կանխավճարների կամ մասնակի վճարումների դեպքում՝ գումարը մուտքագրելուց անմիջապես հետո տրամադրել ՀԴՄ կտրոն։ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգրք) 380-րդ և 380.1-ին հոդվածներին համապատասխան՝ ՀԴՄ կիրառողները պատվերների հիման վրա մանրածախ վաճառք (առաքում) իրականացնելիս, բնակչության համար աշխատանքներ կատարելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս ՀԴՄ կտրոնները կարող են տպագրել (գեներացնել) նախօրոք՝ պայմանով, որ ապրանքների մատակարարման (առաքման) դեպքում դրանք պետք է տպագրվեն (գեներացվեն) մինչև մատակարարվող ապրանքների՝ առաքման վայրից կամ առաքման կետից դուրս բերելը։

Նույն Կանոնների 9-րդ կետի համաձայն՝ ՀԴՄ-ի աշխատանքի ընթացքում անսարքություն հայտնաբերելիս՝ պատասխանատու անձը պարտավոր է անջատել ՀԴՄ-ն և դրա մասին անհապաղ տեղեկացնել իր ղեկավար անձին, որն առավելագույնը 3 ժամվա ընթացքում սպասարկման կենտրոնին տեղեկացնում է ՀԴՄ-ի անսարքության մասին։ Մինչև ՀԴՄ-ի նորոգումը կամ այն նորով փոխարինելը՝ ՀԴՄ-ների պարտադիր կիրառմամբ գործարքներ կատարելն արգելվում է։

Կանոնների 17-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն՝ օրենսգրքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով՝ ՀԴՄ-ի կիրառության կանոնների խախտում է դիտվում 2) ՀԴՄ-ի կտրոն չտրամադրելը, այդ թվում՝ ստացված կանխավճարի դիմաց, 3) գնված ապրանքի կամ ընդունված աշխատանքի կամ ստացված ծառայության արժեքը (այդ թվում՝ կանխավճարի) չմուտքագրելը կամ դրանց արժեքից ցածր արժեքի (այդ թվում՝ կանխավճարից ցածր կանխավճարի) մուտքագրումը։

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀԴՄ կտրոնը տնտեսվարող սուբյեկտի կողմից կանխիկ կամ քարտային վճարով վաճառքի կամ ծառայության մատուցման փաստը հաստատող հարկային փաստաթուղթ է, որն ստեղծվում է էլեկտրոնային ձևով ու տպագրվում և տրամադրվում է հսկիչ-դրամարկղային մեքենայի միջոցով՝ գևորդի կողմից գնված ապրանքի կամ մատուցված ծառայության դիմաց գումարը վճարելու պահին (կամ անմիջապես գործարքի ավարտին)։ ՀԴՄ կտրոնը պարունակում է գործարքի մասին տեղեկատվություն, հաստատում է դրա իրականացման փաստը և պետք է համապատասխանի դրամարկղային սարքավորումների օգտագործման մասին ՀՀ օրենսդրության պահանջներին։

Հարկային իրավունքի տեսանկյունից տնտեսվարողի կողմից ՀԴՄ կտրոն տալը երկուստեք էական նշանակություն ունի ոչ միայն հարկ վճարողի՝ վաճառողի կամ ծառայություն մատուցողի, ու սպառողի՝ գևորդի, այլ նաև հարկային մարմնի (պետության) համար։ Մասնավորապես, ՀԴՄ կտրոն տալն ինքնին հաստատում է տնտեսվարողի և գևորդի կողմից իրականացված գործարքի փաստը, վկայում տնտեսվարողի իրական եկամուտի մասին և, ըստ էության, հարկերի հաշվառման և վճարման երաշխիք է։ Նշվածը հարկային մարմնին թույլ է տալիս վերահսկել, որ տնտեսվարողը վճարի հարկերն իր իրական եկամուտների հիման վրա։ Մյուս կողմից՝ սպառողի տեսանկյունից, ՀԴՄ կտրոնը վերցնելը երաշխիք և ապացույց է անորակ, ոչ պատշաճ ապրանքի վերադարձի, երբեմն՝ ծառայության որակի բողոքարկման, սպառողների իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու համար։ Ըստ էության, ՀԴՄ կտրոն տալու օրենսդրի պահանջը նպաստում է հարկային մարմնի կողմից չգրանցված և/կամ թերի գրանցված եկամուտների բացահայտմանը, կանխում է

հարկերի վճարումից խուսափելը, խթանում է շուկայում արդար մրցակցությունը:

Ըստ ՀՀ հարկային օրենսգրքի 381-րդ և 416-րդ հոդվածների, ՀՀ կառավարության 03.12.2020 թվականի թիվ 1976-Ն որոշման դրույթների՝ տնտեսվարողները պարտավոր են գրանցել բոլոր գործարքները ՀԴՄ սարքերում, իսկ դրանց հաշվառումը պետք է արտացոլվի «Z» հաշվետվությամբ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Կանոնների 13-րդ կետի համաձայն՝ ՀԴՄ օգտագործող անձին արգելվում է կողմնակի անձանց թույլատրել աշխատել ՀԴՄ-ի հետ՝ բացառությամբ ՀԴՄ-ների կիրառման ստուգում կամ ուսումնասիրություն (հսկիչ գնում) իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձանց, իսկ անսարքության դեպքում՝ նաև տեխնիկական սպասարկում իրականացնող մասնագետներին:

Կանոնների 14-րդ կետի համաձայն՝ ՀԴՄ-ի կիրառման, ՀԴՄ-ի միջոցով դրամական հաշվարկների կանոնների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով հարկային մարմինը հսկիչ գնումներ կատարում է օրենսգրքով սահմանված կարգով:

Որոշման «Հսկիչ դրամարկղային մեքենային և ցանցային կապի միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջներ» վերտառությամբ թիվ 1 հավելվածի 20-րդ կետի համաձայն՝ ֆիսկալ հաշվետվությունների գներացման և տպագրման գործառույթը պետք է ապահովի «X» և «Z» տեսակի հաշվետվությունների տպագրում և գներացում:

Նույն հավելվածի 22-րդ կետի համաձայն՝ «Z» հաշվետվությունը պետք է պարունակի հետևյալ վավերապայմանները՝

- 1) հարկ վճարողի անվանումն ու հարկային մարմնում հաշվառման համարը.
- 2) ՀԴՄ-ի գրանցման համարը.
- 3) հաշվետվության տպման ամսաթիվը (տարին, ամիսը, օրը) և ժամը.
- 4) ժամանակաշրջանը, որի համար տպվել է հաշվետվությունը.
- 5) Նշված ժամանակահատվածում տպված կտրոնների վերաբերյալ տեղեկատվություն, որում՝

ա. մեկօրյա ժամանակահատվածի նշման դեպքում արտացոլվում են տվյալ օրվա ընթացքում տպված կտրոնների համարները, տպման ժամը և յուրաքանչյուր կտրոնի գումարը: Կանխավճարի կտրոնների դեպքում գումարները նշվում են առանձին տողով և նշվում է (Կ),

բ. մեկ օրից ավելի ընտրված ժամանակահատվածի դեպքում արտացոլվում են նշված ժամանակահատվածում ըստ օրերի տպված կտրոնների քանակն ու ընդհանուր գումարը, ընդ որում նույն օրվա դրությամբ իրականացված վաճառքի և վերադարձի կտրոնների գումարները լրացվում են առանձին տողով: Կանխավճարի կտրոնների դեպքում գումարները նշվում են առանձին տողով և նշվում է (Կ):

6) հասույթի բաղադրիչ տարրերի ամփոփ գումարները, ընդհանուր վաճառքի ԱԱՀ-ի գումարը, եթե գործարքն իրականացնողը ԱԱՀ վճարող է և գործարքը ենթակա է ԱԱՀ-ով հարկման, վերադարձի ԱԱՀ-ի գումարը, եթե գործարքն իրականացնողը ԱԱՀ վճարող է, և գործարքը ենթակա է ԱԱՀ-ով հարկման, կանխավճարի գումարը, այդ թվում՝ վերադարձված կանխավճարի գումարը, ֆիսկալ հասույթի գումարն ու ֆիսկալ հասույթի ԱԱՀ-ի գումարը, եթե գործարքն իրականացնողը ԱԱՀ վճարող է, և գործարքը ենթակա է ԱԱՀ-ով հարկման.

- 7) դրամարկղում առկա գումարը:

Վերոգրյալ իրավանորմերի համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հսկիչ գնման տեսքով հարկային ուսումնասիրություն իրականացրած լինելու փաստը կարող է հիմնավորվել նաև «Z» հաշվետվությամբ, որը տրամադրվում է հենց ՀԴՄ սարքի տեխնիկական հիշողությունից՝ առանց որևէ մարդկային միջամտության, ինչն էլ իր հերթին վկայում է այդ հաշվետվության օբյեկտիվ բնույթի մասին: Այսինքն, «Z» հաշվետվությունն ունի ավտոմատացված բնույթ, ուղղակիորեն ստացվում է ՀԴՄ սարքից և արտացոլում է գործարքների վերաբերյալ օրվա ավարտին կամ օրվա համապատասխան միջակայքին վերաբերող ամփոփ տվյալներ: Հատկանշական է, սակայն, որ «Z» հաշվետվությունը դուրս բերելու համար հարկային մարմինը տվյալ ՀԴՄ սարքով պետք է կատարի գործարք: Ընդ որում, ՀՀ կառավարության վերը նշված որոշման թիվ 3-րդ հավելվածի 13-րդ կետի դրույթներից հետևում է, որ ՀԴՄ օգտագործող անձից բացի, այլ անձանց ՀԴՄ-ի հետ աշխատել թույլատրվում է միայն սահմանված բացառությունների պայմաններում, այդ թվում՝ ՀԴՄ-ների կիրառման ստուգում կամ ուսումնասիրություն (հսկիչ գնում) իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձանց կողմից: Այսինքն, հսկիչ գնում իրականացրած հարկային մարմինը, համապատասխան լիազորությունները վկայող փաստաթղթերի, այդ թվում՝ հսկիչ գնում իրականացնելու հանձնարարագրի ներկայացումից հետո, բացառապես տնտեսվարողի իմացությամբ և թույլտվությամբ, կարող է ՀԴՄ սարքից հանել «Z» հաշվետվությունը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ, ըստ Եւրոպան, «Z» հաշվետվությունը և հարկային մարմնի կողմից կազմված՝ տնտեսվարողի կողմից թույլ տրված իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 26-րդ և 27-րդ հոդվածների իմաստով հանդիսանում են բավարար ապացույցներ՝ հարկային ուսումնասիրության ընթացքում տնտեսվարողի կողմից ՀԴՄ կտրոն չտրամադրելը որպես հարկային իրավախախտում որակելու և տնտեսվարողի նկատմամբ ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածով սահմանված տուգանք նշանակելու համար:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Դատարանի վճռով հայցը բավարարվել է՝ անվավեր են ճանաչվել Կոմիտեի 27.03.2023 թվականի թիվ 4229680 արձանագրությունը և Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 05.05.2023 թվականի թիվ 34/16 որոշումը: Դատարանն

արձանագրել է, որ «(...) սույն գործով չի հաստատվում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այն փաստը, որ 02.03.2023 թվականին ժամը 15:35-ին ք. Երևան, Օհանով 26/6 հասցեում գործող դեղատնից կատարվել է գնում 990 ՀՀ դրամի չափով՝ բժշկական սպիրտ և կարդիոասպիրին, որի դիմաց չի տրամադրվել ՀԴՄ կտրոն: Մասնավորապես, Դատարանը փաստում է, որ վիճարկվող վարչական ակտի հիմք ծառայած փաստերի մասով ապացուցման բեռը կրում է պատասխանող Կոմիտեն, մինչդեռ վերջինիս կողմից բժշկական սպիրտ և կարդիոասպիրին գնելու, դրա դիմաց գումար տալու և Ընկերության կողմից ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստերի վերաբերյալ չեն ներկայացվել նշված փաստերը հաստատող ապացույցներ:

Ինչ վերաբերում է վիճարկվող վարչական ակտի ընդունման վարույթում առկա ապացույցներին, մասնավորապես՝ Կոմիտեի 02.03.2023 թվականի «Հսկիչ գնման (գնումների) ընթացքում կատարված խախտումների վերաբերյալ» թիվ 4229680 արձանագրությանը, ապա Դատարանն արձանագրում է, որ հայցվորը հրաժարվել է այն ստորագրելուց՝ այդպիսով հայտնելով իր անհամաձայնությունը դրանում արձանագրված փաստերի հետ, ավելին՝ տվյալ դեպքում առկա չէ նաև գնումների արդյունքում վաճառված ապրանքների հետընդունման ակտ, որպիսի պայմաններում դրանում արտացոլված փաստերը չեն կարող հիմնավորված համարվել:

Վերոգրյալ նորմերի և սույն գործի փաստերի համադրման արդյունքում Դատարանը գտնում է, որ 02.03.2023 թվականին ժամը 15:35-ին ք. Երևան, Օհանով 26/6 հասցեում գործող դեղատնից բժշկական սպիրտ և կարդիոասպիրին գնելու, դրա դիմաց գնորդից գումար ստանալու և ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստերի չապացուցված մնալու պայմաններում դրա բացասական հետևանքները պետք է կրի փաստի ապացուցման բեռը կրող կողմը, տվյալ դեպքում՝ վիճարկվող ակտը կազմած վարչական մարմինը, ինչից էլ հետևում է, որ տվյալ դեպքում բացակայում է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման փաստը»:

Վերաքննիչ դատարանի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բոլորը մերժվել է, և Դատարանի 19.01.2024 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ: Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «(...) ՀԴՄ կտրոնում և ֆիսկալային հաշվետվություններում առկա տեղեկություններով չի հաստատվում գնում կատարելու փաստը:

Հատկանշական է, որ վարչական վարույթի նյութերում բացակայում է ապրանքների հետ ընդունման ակտը կամ որևէ ապացույց՝ գնումից հետո դրանց ապրանքային տեսքը և սպառողական հատկանիշները փոփոխվելու վերաբերյալ, իսկ Կոմիտեի 02.03.2023 թվականի «Հսկիչ գնման (գնումների) ընթացքում կատարված խախտումների վերաբերյալ» թիվ 4229680 արձանագրության՝ «Հարկ վճարող (գործադիր մարմնի ղեկավար) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի և հարկ վճարողի անունից ապրանքներ մատակարարող (վաճառող), աշխատանքներ կատարող, ծառայություններ մատուցող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատող» հատվածում առկա է հետևյալ նշումը. «Մարիամ Հարությունյանը հրաժարվեց ստորագրել» բովանդակությամբ (գ.թ. 57-58):

Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վարչական վարույթի նյութերում առկա ապացույցների համակցությունը բավարար չեն փաստելու գնում կատարված լինելու փաստական հանգամանքը, որպիսի պայմաններում վիճելի է մնում վիճարկվող վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացած հանգամանքները, ինչի բացասական հետևանքները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի իմաստով, պետք է կրի վարչական ակտն ընդունված վարչական մարմինը»:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վեճին իրավաչափ լուծում տալու տեսանկյունից անհրաժեշտ է անդրադառնալ հսկիչ գնման փաստի ապացուցման առանձնահատկություններին:

Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաբերելի է այն ապացույցը, որն ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլինեք առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը դատական ակտի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ապացուցման բեռը կրում է՝ վիճարկման հայցով՝ վարչական մարմինը, որն ընդունել է միջամտող վարչական ակտը՝ դրա համար հիմք

ծառայած փաստերի մասով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում (...):

Վերոգրյալ իրավանորմերի համադրումից հետևում է, որ գործով դատարանի առջև բարձրացված խնդրին իրավաչափ լուծում տալու և այդ նպատակով բազմակողմանի, լրիվ ու օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգեյուլ համար դատարանը պարտավոր է հետազոտել և գնահատել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերն ու իրեն վերապահված՝ նշված լիազորությունների իրացման ու պահանջների պահպանման արդյունքում միայն որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու հարցը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկով անդրադառնալով վերը նշված նորմերի վերլուծությանը, արձանագրել է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական

նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող

փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝

դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ապացույցների գնահատումը՝ որպես ապացուցման գործընթացի տարր, մտավոր, տրամաբանական գործունեություն է, որի արդյունքում դատարանի կողմից

եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման առարկայի մեջ մտնող

հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին: Վարչադատավարական օրենսդրության համաձայն՝ դատարանը գործում եղած բոլոր ապացույցները գնահատում է ներքին համոզմամբ, որը պետք է հիմնված լինի գործում առկա

բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա: ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ թեև ներքին համոզմունքը սուբյեկտիվ կատեգորիա է, այդուհանդերձ օրենսդիրն այն դիտարկում է որպես ապացույցների գնահատման միջոց, որը

հանգեցնում է իրավական գնահատականների, հետևաբար և դատավարական օրենսդրությամբ նախատեսել է դրա օբյեկտիվության ապահովմանն ուղղված որոշակի

երաշխիքներ, մասնավորապես՝
1) որպես դատարանի ներքին համոզմունքի օբյեկտիվ հիմք պետք է հանդիսանա գործում եղած ամեն մի ապացույցի և ապացույցների համակցության բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությունը,

2) դատարանն ազատ է ապացույցների գնահատման գործում:

Ներքին համոզմամբ ապացույցների ազատ գնահատումը ենթադրում է, որ դատարանը կաշկանդված չէ տվյալ ապացույցին գործին մասնակցող և այլ անձանց տված գնահատականներով և արտահայտած կարծիքներով:

Դատարանի կողմից ապացույցների գնահատման արդյունքներն արտացոլվում են դատական ակտի պատճառաբանական մասում, որտեղ դատարանը պետք է մատնացույց

անի այն ապացույցները, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հերքում է այս կամ այն ապացույցը: Դատական ակտը միայն այն դեպքում կարող է համարվել պատշաճորեն պատճառաբանված, երբ դրա

պատճառաբանական մասում դատարանը ցույց է տվել ապացույցների գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման հիմքերը: Այսպիսով, ապացույցների գնահատման արդյունքում ձևավորված ներքին համոզմունքն իրավական նշանակություն է ստանում և օբյեկտիվացվում դատական ակտերին ներկայացվող՝ հիմնավորվածության և

պատճառաբանվածության օրենսդրական պահանջի միջոցով (տե՛ս, Հայկ Սիմոնյանն ընդդեմ Գյումրու համայնքապետարանի թիվ ՎԴ5/0173/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.11.2021 թվականի որոշումը):

Քննարկվող պարագայում, գործի նյութերով հիմնավորվել է, որ Կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության պետի 24.02.2023 թվականի թիվ 4229680 հանձնարարագրի հիման վրա հանձնարարվել է Ընկերությունում իրականացնել հսկիչ գնման միջոցով հարկային ուսումնասիրություն: Հանձնարարագրով, որպես

ուսումնասիրության իրավական հիմք, վկայակոչվել են ՀՀ հարկային օրենսգրքի 343-րդ հոդվածի և իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ հարկային օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի դրույթները:

Գործում առկա է Կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության կողմից 27.03.2023 թվականին կազմված թիվ 4229680 արձանագրությունը, որի համաձայն՝ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և

(կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների համար սահմանված կարգերի ու կանոնների պահանջների պահպանումն ուսումնասիրելու նպատակով Կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-

վարչության ՓՀՎՀՀ թիվ 4 բաժնի գլխավոր հարկային տեսուչ Ա.Ա.-ի⁵ կողմից 02.03.2023

թվականին՝ ժամը 15:35-ին, ք. Երևան, Օհանով 26/6 հասցեում գործող դեղատնից կատարվել է հսկիչ գնում 990 ՀՀ դրամի չափով՝ բժշկական սպիրտ և կարոդիասպիրին, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով, վճարվել է 1.000 ՀՀ դրամ, որից վերադարձվել է մանրը՝ 10 ՀՀ դրամ, աշխատակցի կողմից գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Միաժամանակ, ըստ նույն արձանագրության՝ ստուգումն իրականացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման, այնուհետև՝ ավագ հարկային տեսուչ Ա.Բ.-ի՞ կողմից ժամը **«15:37»**-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն՝ 80.972 ՀՀ դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չի եղել կատարված վճարման արժեքը: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 990 ՀՀ դրամը, ժամը **«15:38»**-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն (ԿՀ: 00077928) և ժամը **«15:38»**-ին նորից դուրս է բերվել «Z» հաշվետվությունը՝ 81.962 ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

Միաժամանակ, գործում առկա են տնտեսվարողի մոտ գտնվող ՀԴՄ սարքից դուրս բերված «Z» հաշվետվության պատճենները, ըստ որոնց 02.03.2023 թվականին՝ ժամը **«15:07»**-ին, ՀԴՄ-ից դուրս է բերվել 80.972 ՀՀ դրամ ընդհանուր գումարով «Z» հաշվետվություն, իսկ ժամը **«15:08»**-ին՝ 81.962 ՀՀ դրամ ընդհանուր գումարով «Z» հաշվետվություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ, ինչպես վերը նշվեց, հսկիչ գնման (գնումների) ընթացքում կատարված խախտումների վերաբերյալ արձանագրությունը և ՀԴՄ սարքի «Z» հաշվետվությունը բավարար ապացույցներ են տնտեսվարողի կողմից ՀԴՄ կտրոն չտրամադրելու իրավախախտման փաստն արձանագրելու համար, այդուհանդերձ սույն գործով առկա ապացույցներով չի հիմնավորվում այն փաստը, որ Ընկերությունում 02.03.2023 թվականին՝ ժամը **«15:37»**-ին և **«15:38»**-ին անցկացվել է հսկիչ գնման տեսքով հարկային ուսումնասիրություն: Վճռաբեկ դատարանը նման եզրակացության է հանգում վարչական վարույթի նյութերում առկա 02.03.2023 թվականի «Z» հաշվետվության պատճենների և 27.03.2023 թվականի թիվ 4229680 արձանագրության համադրման արդյունքում:

Մասնավորապես, ըստ 02.03.2023 թվականի «Z» հաշվետվությունների՝ դրանք դուրս են բերվել համապատասխանաբար ժամը **«15:07»**-ին և **«15:08»**-ին, իսկ ըստ 27.03.2023 թվականի թիվ 4229680 արձանագրության՝ 80.972 ՀՀ դրամ ընդհանուր գումարով «Z» հաշվետվությունը ՀԴՄ-ից դուրս է բերվել ժամը **«15:37»**-ին, այնուհետև՝ «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 990 ՀՀ դրամը, ժամը **«15:38»**-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն (ԿՀ: 00077928) և ժամը **«15:38»**-ին նորից դուրս է բերվել «Z» հաշվետվությունը՝ 81.962 ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ բոլոր բերած անձի պնդումն այն մասին, որ հսկիչ գնում կատարվել է և ՀԴՄ սարքից «Z» հաշվետվությունը դուրս է բերվել Ընկերության աշխատակցի իմացությամբ ու թույլտվությամբ, սույն գործի նյութերով և վճռաբեկ բողոքի փաստարկներով չի հիմնավորվում: Միաժամանակ, այն պարագայում, երբ սույն գործով չի հիմնավորվում, որ տնտեսվարողի մոտ 02.03.2023 թվականին ժամը **«15:37»**-ին և **«15:38»**-ին անցկացվել է հսկիչ գնման տեսքով հարկային ուսումնասիրություն, հերքվում են նաև բողոքում ներկայացված մյուս փաստարկները ևս:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը կրկին ընդգծում է, որ ՀԴՄ սարքից վերցված «Z» հաշվետվությունը և հարկային ծառայողների կողմից կազմված արձանագրությունը կարող են գնահատվել որպես վերաբերելի, թույլատրելի ու արժանահավատ ապացույցներ, և որոնցով կարող են հիմնավորվել համապատասխան ժամանակահատվածում համապատասխան տնտեսվարողի մոտ հսկիչ գնում կատարված լինելու, տնտեսվարողի կողմից նշված գործարքը գրանցված չլինելու փաստերը, եթե դրանք կազմվել են ՀՀ հարկային օրենսգրքի դրույթների պահպանմամբ՝ հաշվի առնելով նաև, որ «Z» հաշվետվությունը ոչ միայն Էլեկտրոնային թվային փաստաթուղթ է, այլ նաև ուղղակի և ճշգրիտ ցուցիչ, որը հանդիսանում է ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ հաստատված ՀԴՄ սարքի պարտադիր օգտագործման և հաշվառման մեխանիզմի բաղկացուցիչ: **Մինչդեռ, սույն գործով** առկա փաստաթղթերով չի հիմնավորվում 27.03.2023 թվականի թիվ 4229680 արձանագրությամբ նշված այն փաստը, որ տնտեսվարողի մոտ 02.03.2023 թվականին ժամը **«15:37»**-ին և **«15:38»**-ին անցկացվել է հսկիչ գնում, քանի որ գործում առկա «Z» հաշվետվության պատճեններով պարզ է դառնում, որ նշված ժամերին տնտեսվարողի մոտ 990 ՀՀ դրամի մուտքագրում ՀԴՄ սարք չի կատարվել, ուստի հսկիչ գնում կատարված լինելու փաստը ևս չի կարող հաստատված համարվել:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով չի հիմնավորվում տնտեսվարողի կողմից իրավախախտում թույլ տրված լինելու հանգամանքը, հետևաբար դատարաններն ըստ Էության հանգել են իրավաչափ եզրակացության Կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 27.03.2023 թվականի թիվ 4229680 վարչական ակտը՝ արձանագրությունը, անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Վերոշարադրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից վճռաբեկ բողոքում նշված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ և 27-րդ հոդվածների, Կանոնների 3-րդ կետի, 13-րդ կետի, 17-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի խախտում թույլ տրված լինելու, ու այդ խախտմամբ արդարադատության բուն էությունը խաթարված լինելու մասին բողոք բերած անձի փաստարկները հիմնավորված չեն, ինչը բավարար է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված լիազորությունը կիրառելու՝ վճռաբեկ բողոքը մերժելու և Վերաքննիչ դատարանի 16.10.2024 թվականի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու համար՝ սույն որոշման պատճառաբանություններով:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կոմիտեի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական տուրքից բացի, այլ դատական ծախս կատարված լինելու վերաբերյալ որևէ ապացույց գործում առկա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 16.10.2024 թվականի որոշումը թողնել անփոփոխ:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

¹ Հանդիսանում է անձնական տվյալ

² Հանդիսանում է անձնական տվյալ

³ Հանդիսանում է անձնական տվյալ

⁴ Հանդիսանում է անձնական տվյալ

⁵ Հանդիսանում է անձնական տվյալ

⁶ Հանդիսանում է անձնական տվյալ

**Նախագահող
Չեկուցող**

**Հ. Բեդևյան
Ք. Մկոյան
Ա. Թովմասյան
Լ. Հակոբյան
Ռ. Հակոբյան**

Պաշտոնական հրապարակման օրը՝ 10 նոյեմբերի 2025 թվական: